



Ալիկ ԹՈՐՈՍՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

2020 թ. ավարտել է ՀՊՏՀ բա-
կալավրիատը՝ «Տնտեսագիտու-
թյուն» մասնագիտությամբ, ապա՝
«Մակրոտնտեսական վերլուծու-
թյուն» մագիստրոսական ծրա-
գիրը: 2023-2025 թթ. սովորել է
ՀՊՏՀ տնտեսագիտության տն-
տեսական ամբիոնում՝ որպես աս-
պիրանտ: 2025 թ. պաշտպանել
է թեկնածուական ատենախո-
սություն և ստացել տնտեսագի-
տության թեկնածուի գիտական
աստիճան: 2024 թվականից աշ-
խատում է «Ամբերդ» հեղափո-
խական կենտրոնում որպես
կրթություն հեղափոխող:



<https://orcid.org/0000-0002-5416-7565>

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆՎԱԶՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.


ՄԱՍ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2025.2-58

Հիմնաբառեր. ջուր, ջրային ռեսուրսներ, գյուղա-
տնտեսություն, էներգետիկա, մշա-
կող արդյունաբերություն, տարած-
քային անհամաչափ զարգացում

Ջրային ռեսուրսները ոչ միայն բնակչության բնա-
կանոն կենսագործունեության համար անհրաժեշտ
անփոխարինելի բարիք են, այլև մի շարք ոլորտնե-
րում արտադրվող արտադրատեսակների համար՝
առաջնային կարևորություն ունեցող ռեսուրս: Նման
ոլորտներից են գյուղատնտեսությունը, էներգետի-
կան և մշակող արդյունաբերությունը: Վերջին տա-
րիներին նկատվում է ՀՀ տարածքում ձևավորվող
ջրային ռեսուրսների ծավալների նվազում, ինչը պայ-
մանավորված է ինչպես բնական պայմանների փոփո-
խությամբ, այնպես էլ համապատասխան ռեսուրս-
ների անարդյունավետ կառավարմամբ: Իհարկե,
նման պայմաններում ջրային ռեսուրսներից կախում
ունեցող ոլորտներն էական ազդեցություն են կրում:
Ջրային ռեսուրսների նվազումը հանգեցնում է ինչ-
պես գյուղատնտեսության և էներգետիկայի ոլորտ-
ների արդյունքի նվազմանը, այնպես էլ այդ ոլորտ
ներում ստեղծվող ապրանքների գների բարձրաց-
մանը: Բացի դրանից, ջրային ռեսուրսների անար-
դյունավետ և անհամաչափ կառավարումը պատճառ
է դառնում երկրի տարբեր տարածաշրջանների ան-
համաչափ զարգացման:

Ջրային ռեսուրսները մարդկանց տնտեսա-
կան գործունեության հիմքն են: Դեռևս վաղ
ժամանակներից, երբ երկրների տնտեսությունները հիմն-
ված էին գյուղատնտեսության վրա, քաղաքակրթություն-
ները ձևավորվում էին հիմնականում ջրային աղբյուրնե-
րին մոտ, որը հնարավորություն էր տալիս մարդկանց
գրավելու հողագործությամբ և անասնապահությամբ:
Չնայած տեխնոլոգիական զարգացումը հանգեցրել է



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Մատակարարված ոռոգման ջրի կառուցվածքը, 2010-2023 թթ. (տոկոս)¹

երկրների տնտեսությունների ճյուղային կառուցվածքի բազմազանեցմանը և ավելի բարդ արտադրությունների կազմակերպմանը, սակայն ջրային ռեսուրսները դեռևս առաջնային նշանակություն ունեն արտադրություններ հիմնելու և տնտեսական զարգացում ապահովելու համար:

Վերջին տարիներին Հայաստանում նկատվում է ջրային ռեսուրսների նվազման միտում, որը մի կողմից պայմանավորված է բնական երևույթներով, մյուս կողմից՝ մարդկային գործոնով: Ջրային ռեսուրսների նման նվազումը կարող է առաջացնել ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք բացասական հետևանքներ:

Հայաստանում ջրային աղբյուրներից ջրի հոսքի նվազումն ավելին է, քան միայն բնապահպանական խնդիր, քանի որ դա կարող է ազդել ամբողջ տնտեսության վրա: Ջրային ռեսուրսները, բացի մարդկանց բնականոն կենսապահովման ապրանք լինելուց, նաև անհրաժեշտ ռեսուրս է մի շարք ապրանքատեսակների արտադրության համար: Այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են, օրինակ, գյուղատնտեսությունը և էներգետիկան, ուղղակիորեն կախված են ջրային ռեսուրսներից: Գյուղատնտեսությունը, որը մի կողմից՝ երկրի տնտեսության երկրորդ ամենամեծ ոլորտն է, իսկ մյուս կողմից՝ բնակչության պարենային անվտանգության ապահովման կարևորա-

գույն բաղադրիչը, ամբողջությամբ կախված է ոռոգման ջրի մատակարարումներից:


Հայաստանում ոռոգման ջրի մատակարարման համակարգը թերզարգացած է, ինչի հետևանքով մի շարք հողատարածքներ, որտեղ հողի բերրիությունը թույլ է տալիս զբաղվել գյուղատնտեսությամբ, չեն օգտագործվում գյուղատնտեսական նշանակությամբ: Կապված ոռոգման ջրի համակարգի թերզարգացածության հետ՝ մի շարք տարածքներում մշակվում են միայն այնպիսի բուսատեսակները, որոնք հնարավոր է ոռոգել անձրևաջրերի միջոցով: Այդպիսի բուսատեսակներից են ցորենը, գարին, խոտը, կանաչ կերը և այլն: Նման ձևով գյուղատնտեսությամբ զբաղվելն ամբողջությամբ կախված է տեղումների քանակից:

Բացի դրանից, Հայաստանում ոռոգման ջրի համակարգը մեծապես կախված է ինքնահոս եղանակով ստացվող ջրից: Գծապատկեր 1-ում ներկայացված է 2010-2023 թվականների ընթացքում մատակարարված ոռոգման ջրի կառուցվածքը:

Գծապատկերի տվյալներից կարելի է նկատել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում մատակարարված ոռոգման ջրի 90 տոկոսից ավելին ստացվել է ինքնահոս, իսկ 10 տոկոսից պակասը՝ մեխանիկական եղանակով:

Մեխանիկական եղանակով ջրի մատա-

¹ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Հաշվետվություններ: Ջրամատակարարման և ջրահեռացման հաշվեկշիռ, 2010-2023 թթ.:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2




Հացահատիկային մշակաբույսերի և բանջարեղենի արտադրության ծավալները ՀՀ-ում, 2010-2023 թթ. (1000 տոննա)²

կարարման անհրաժեշտություն առաջանում է այն ժամանակ, երբ ինքնահոս եղանակով ստացվող ջրի քանակությունը չի բավարարում դրա նկատմամբ պահանջարկը: Հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ հենց այն տարիներին, երբ ինքնահոս եղանակով ստացվող ջրի ծավալները նվազել են, այդ տարիներին մեխանիկական եղանակով ստացվող ոռոգման ջրի ծավալներն ավելացել են³:

Ինքնահոս եղանակով ստացվող ջրի քանակության նվազումը և մեխանիկական եղանակով ստացվող ջրի քանակության ավելացումը, առաջին հերթին, ազդում են հացահատիկային մշակաբույսերի

և բանջարեղենի արտադրության վրա: Գծապատկեր 2-ում ներկայացված են հացահատիկային մշակաբույսերի և բանջարեղենի արտադրության ծավալները ՀՀ-ում՝ 2010-2023 թվականներին:

Գծապատկեր 2-ի տվյալներից կարելի է նկատել, որ հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները ՀՀ-ում աճել են մինչև 2012 թվականը, մինչդեռ 2012-2015 թվականներին աճը սկսել է դանդաղել, իսկ 2016 թվականից սկսած՝ կտրուկ նվազել: Միաժամանակ, մատակարարված ոռոգման ջրի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հենց 2012-2015 թվականներից սկսած՝



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3




Հացահատիկային մշակաբույսերի և բանջարեղենի արտադրության ծավալները ՀՀ-ում, 2010-2023 թթ. (1000 տոննա)⁴

² ՀՀ վիճակագրական կոմիտե: Տարեգիրք: Գյուղատնտեսություն, 2010-2023 թթ.:

³ Ենթադրվում է, որ ոռոգման ջրի նկատմամբ պահանջարկը համեմատաբար կայուն է ժամանակի ընթացքում:

⁴ ՀՀ վիճակագրական կոմիտե: Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2010-2023 թթ.:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՀՀ-ում հացահատիկային մշակաբույսերի և բանջարեղենի ներմուծման ծավալները, 2010-2023 թթ. (1000 ԱՄՆ դոլար)⁵

մեխանիկական եղանակով ստացված ջրի քանակությունն աճել է ոռոգման ջրի կառուցվածքում, իսկ ինքնահոս եղանակով ստացվող ջրի քանակությունը՝ նվազել։ Բանջարեղենի արտադրության դեպքում արտադրության ծավալների կտրուկ անկում գրանցվել է ավելի վաղ՝ 2015 թվականից ի վեր, երբ ինքնահոս եղանակով ստացվող ջրի քանակությունը նվազման շարժընթաց է դրսևորել։

Իհարկե, ինքնահոս եղանակով ստացվող ջրի քանակության և գյուղատնտեսական ապրանքների արտադրության ծավալների նվազման միջև այս կապն անդրադարձել է նաև գյուղատնտեսական ապրանքների գների վրա։ Գծապատկեր 3-ում ներկայացված է հացահատիկային մշակաբույսերի և բանջարեղենի իրացման գների ինդեքսը նախորդ տարվա համեմատ՝ 2010-2023 թվականներին։


Չնայած մինչև 2015-2016 թվականները հացահատիկային մշակաբույսերի ներմուծումը նվազման միտում է ունեցել, որը պայմանավորված է եղել ՀՀ-ում այս մշակաբույսերի արտադրության ծավալների ավելացմամբ և գների մակարդակի նվազմամբ, սակայն դա սկսել է աճել 2016 թվականից հետո, երբ ՀՀ-ում այս մշակաբույսերի արտադրությունը սկսել է նվազել։ Նույնը վերաբերում է նաև բանջարեղենին, որի ներմուծման ծավալները նվազել են մինչև 2017 թվականը, ապա սկսել աճել,

որը, ինչպես հացահատիկային մշակաբույսերի դեպքում, համընկնում է ՀՀ-ում բանջարեղենի արտադրության ծավալների նվազման և գների բարձրացման հետ։

Էներգետիկան նույնպես մեծագույն կախվածություն ունի ջրային ռեսուրսներից։ Նախ և առաջ, հիդրոէլեկտրակայանները, որոնք արտադրում են ՀՀ էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալի 20-30 տոկոսը, ամբողջությամբ կախված են ջրային ռեսուրսներից։ Հիդրոէլեկտրակայանների կողմից էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներն ուղղակիորեն կոռելացված են ինքնահոս եղանակով ստացվող ոռոգման ջրի ծավալների հետ, քանի որ ինչպես հիդրոէլեկտրակայաններում օգտագործվող, այնպես էլ ոռոգման համար օգտագործվող ինքնահոս ջուրը ստացվում են նույն աղբյուրներից։ Գծապատկեր 5-ում ներկայացված են ՀՀ-ում հիդրոէլեկտրակայանների միջոցով արտադրված էլեկտրաէներգիայի և ինքնահոս եղանակով ստացված ոռոգման ջրի ծավալները՝ 2010-2023 թվականներին։

Գծապատկերի տվյալներից կարելի է նկատել, որ հիդրոէլեկտրակայանների միջոցով արտադրված էլեկտրաէներգիայի, ինչպես նաև ինքնահոս եղանակով ստացվող ոռոգման ջրի ծավալների շարժընթացը գրեթե նույնական է, այսինքն՝ այն տարիներին, երբ ինքնահոս եղանակով ստացվող ջրի ծավալները նվազել են,

⁵ International Trade Center, Trade Map, List of products imported by Armenia, 2010-2023.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5




ՀՀ-ում հիդրոէլեկտրակայանների միջոցով արտադրված էլեկտրաէներգիայի (մլն կՎտ/ժ)⁶ և ինքնահոս եղանակով ստացված ոռոգման ջրի (1000 խոր. մ)⁷

պակասել են նաև հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները:

ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը ձևավորվում է ըստ էլեկտրաէներգիայի արտադրության երեք հիմնական աղբյուրների՝ ատոմակայան, ջերմային էլեկտրակայաններ և հիդրոէլեկտրակայաններ⁸: Քանի որ ատոմային էլեկտրակայանի միջոցով ստացվող էլեկտրաէներգիան ամենամատչելին է, այս էլեկտրակայանը մշտապես աշխատում է իր ամբողջ հզորությամբ: Հետևաբար՝ այն տարիներին, երբ հիդրոէլեկտրակա-

յանների միջոցով արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները նվազում են, դրա նկատմամբ պահանջարկը բավարարելու համար ավելացվում են ջերմային էլեկտրակայանների միջոցով արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները:

Չնայած որ ջերմային էլեկտրակայաններն էլեկտրաէներգիայի արտադրության ժամանակ հիմնականում օգտագործում են վառելիքի որևէ տեսակ՝ ջերմություն ստանալու համար (ՀՀ-ում օգտագործվում է բնական գազ), սակայն կայանի հովացման նպատակով օգտագործվում է նաև մեծ քանակությամբ ջուր: Այս դեպքում



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6



ՀՀ-ում ջերմային էլեկտրակայանների միջոցով արտադրված էլեկտրաէներգիայի (մլն կՎտ/ժ)⁹ և մեխանիկական եղանակով ստացված խմելու ջրի (1000 խոր. մ) ծավալները, 2010-2023 թթ.¹⁰

⁶ ՀՀ վիճակագրական կոմիտե: Տարեգիրք: Արդյունաբերություն, էներգետիկա, 2010-2023 թթ.:

⁷ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Հաշվետվություններ: Ջրամատակարարման և ջրահեռացման հաշվեկշիռ, 2010-2023 թթ.:

⁸ Իհարկե, վերջին տարիներին կտրուկ կերպով ավելացել են նաև արևային էլեկտրակայանների միջոցով արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները, սակայն դեռևս այս երեք աղբյուրներն են արտադրում ամենաշատ էլեկտրաէներգիան:

⁹ ՀՀ վիճակագրական կոմիտե: Տարեգիրք: Արդյունաբերություն, էներգետիկա, 2010-2023 թթ.:

¹⁰ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Հաշվետվություններ: Ջրամատակարարման և ջրահեռացման հաշվեկշիռ, 2010-2023 թթ.:


կիրառվում է խմելու համար նախատեսված ջուր, որը ջերմային էլեկտրակայաններին մատակարարվում է նույն մատակարարման ցանցով, ինչ բնակչությանը մատակարարվող խմելու ջուրը: Հետևաբար՝ այն տարիներին, երբ հիդրոէլեկտրակայաններն արտադրում են քիչ, իսկ ջերմային էլեկտրակայանները՝ ավելի շատ քանակությամբ էլեկտրաէներգիա, ավելանում է խմելու ջրի նկատմամբ պահանջարկը, որը լրացվում է մեխանիկական եղանակով ստացվող ջրի միջոցով: Գծապատկեր 6-ում ներկայացված են ՀՀ-ում ջերմային էլեկտրակայանների միջոցով արտադրվող էլեկտրաէներգիայի և մեխանիկական եղանակով ստացվող խմելու ջրի ծավալները՝ 2010-2023 թվականներին:

Գծապատկերի տվյալներից կարելի է նկատել, որ հիդրոէլեկտրակայանների միջոցով արտադրված էլեկտրաէներգիայի, ինչպես նաև ինքնահոս եղանակով ստացվող ոռոգման ջրի ծավալների շարժընթացը գրեթե նույնական է, այսինքն՝ այն տարիներին, երբ ինքնահոս եղանակով ստացվող ջրի ծավալները նվազել են, պակասել են նաև հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները:

Իհարկե, ջերմային էլեկտրակայանների միջոցով արտադրվող էլեկտրաէներգիայի ինքնարժեքն ավելի բարձր է, քան էլեկտրաէներգիայի արտադրության մյուս աղբյուրներինը: Սրա հիմնական պատճառն

այն է, որ ջերմային էլեկտրակայաններն օգտագործում են բնական գազ՝ ջերմության և մեխանիկական եղանակով ստացվող խմելու ջուր¹¹ կայանի հովացման համար: Հետևաբար՝ այն տարիներին, երբ նվազում են հիդրոէլեկտրակայանների և ավելանում ջերմային էլեկտրակայանների միջոցով արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները, էլեկտրամատակարարման համակարգում բարձրանում է էլեկտրաէներգիայի ինքնարժեքը, որը կարող է ստիպել մատակարարմամբ զբաղվող ընկերությանը էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հայտ ներկայացնել: Գծապատկեր 7-ում ներկայացված է ՀՀ-ում էլեկտրաէներգիայի սակագինը՝ 2010-2023 թվականներին:


Գծապատկերի տվյալներից կարելի է նկատել, որ ՀՀ-ում էլեկտրաէներգիայի սակագինն ուսումնասիրվող ժամանակահատվածում կտրուկ կերպով բարձրացել է երկու անգամ՝ 2013-2014 և 2021-2022 թվականներին: Հենց այդ տարիներին էլ շեշտակիորեն նվազել են ինքնահոս եղանակով ստացվող ոռոգման ջրի և հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները: Օրինակ՝ 2013-2014 թվականներին էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացել է գրեթե 30 տոկոսով, իսկ նույն ժամանակահատվածում հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները նվազել են գրեթե 14 տոկոսով,



ՀՀ-ում էլեկտրաէներգիայի սակագինը (դրամ), 2010-2023 թթ.¹²

¹¹ Մեխանիկական եղանակով ստացվող ջրի ինքնարժեքն ավելի բարձր է, քան ինքնահոս եղանակով ստացվող ջրինը:

¹² ՀՀ վիճակագրական կոմիտե: Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2010-2023 թթ.:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

ՀՀ մարզերում ջրամատակարարման ժամանակահատվածի շարժընթացը (նարնջագույն)¹³ և մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալների աճի տեմպը (կապույտ)¹⁴, 2021-2023 թթ.

ինքնահոս եղանակով ստացվող ոռոգման ջրի ծավալները՝ 6 տոկոսով: Հետևաբար՝ պարզ է դառնում, որ ՀՀ-ում էլեկտրաէներգիայի սակագինը մեծապես կախված է ջրային ռեսուրսներից, և դրանց շարունակական նվազումը կարող է հանգեցնել ինչպես էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմանը, այնպես էլ դրա մատակարարման խափանումներին:

Ջրային ռեսուրսների նվազումը կարող է նաև բերել տարածքային անհամաչափ զարգացման: ՀՀ տարբեր մարզերի ջրամատակարարումն իրականացվում է տարբեր ջրաղբյուրներից, հետևաբար՝ ջրային ռեսուրսների նվազումը տարբեր կերպ է ազդում երկրի տարածաշրջանների վրա: Դա է պատճառը, որ ջրամատակարարման ժամանակահատվածները երկրում վերջին

տարիներին տարբեր ուղղություններով են փոփոխվում: Որոշ մարզերում ավելացել են ջրամատակարարման ժամանակահատվածները, իսկ որոշ մարզերում՝ նվազել, իսկ նման փոփոխությունները բերում են տարածքային անհամաչափ զարգացման:

Քանի որ ջրային ռեսուրսներն օգտագործվում են տնտեսության տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ մշակող արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերում, հետևաբար՝ ջրամատակարարման ժամանակահատվածի տարբերությունները խթանում են մշակող արդյունաբերության անհամաչափ զարգացումը ՀՀ տարբեր մարզերում: Գնահատելու համար ջրային ռեսուրսների նվազման ազդեցությունը մշակող արդյունաբերության ծավալների

¹³ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ: Ջրամատակարարման ժամանակացույց, 2021-2023 թթ., <https://www.veolia.am/hy/media/mamow-li-hagordagrowthowner>

¹⁴ ՀՀ վիճակագրական կոմիտե: Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021-2023 թթ.:

վրա, նախ, ուսումնասիրվել է ՀՀ մարզերում ջրամատակարարման միջին տևողությունը՝ հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» ընկերության հրապարակած ջրամատակարարման ժամանակացույցները¹⁵: Այնուհետև դիտարկվել են ՀՀ մարզերում մշակող արդյունաբերության ծավալների աճի տեմպերը: Ի վերջո, համեմատելով ջրամատակարարման ժամանակահատվածի շարժընթացը և մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալների աճի տեմպը, պատկերացում է կազմվել ՀՀ մարզերի մշակող արդյունաբերության ծավալների վրա ջրային ռեսուրսների նվազման ազդեցության վերաբերյալ: Գծապատկեր 8-ում ներկայացված են ՀՀ մարզերում ջրամատակարարման ժամանակահատվածի շարժընթացը և մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալների աճի տեմպը՝ 2021-2023 թվականներին:

Գծապատկերները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր մարզերում ջրամատակարարման ժամանակահատվածն ուղիղ ազդեցություն է ունենում մշակող արդյունաբերության աճի վրա: Այսինքն՝ այն տարիներին, երբ ջրամատակարարման ժամանակահատվածը տվյալ մարզում մեծանում է, այդ տարիներին արտադրողները հնարավորություն են ունենում ավելացնելու մշակող արդյունաբերության ծավալները: Իսկ այն տարիներին, երբ ջրամատակարարման ժամանակահատվածը փոքրանում է, նվազում է նաև մշակող արդյու-

նաբերության աճը: Այս առումով, առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ ջրամատակարարման ժամանակահատվածը տարեցտարի մեծանում է միայն Երևանում, ինչն էլ մայրաքաղաքն ավելի գրավիչ է դարձնում ինչպես մշակող արդյունաբերության, այնպես էլ տնտեսության այլ ոլորտներում ներդրումներ կատարելու համար:

Ջրային ռեսուրսների նվազումն էական բացասական ազդեցություն է ունենում մարզերի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Ինչպես կարող ենք նկատել գծապատկեր 8-ի տվյալներից, գրեթե բոլոր մարզերում 2023 թվականին ջրամատակարարման ժամանակահատվածը նվազել է: Այսինքն՝ առկա ջրաղբյուրներից արդյունահանված ջրի քանակությունը չի բավարարում երկրում ջրի նկատմամբ պահանջարկի աճը: Իսկ նոր կապիտալ ներդրումները, որոնք հնարավորություն կտան ավելացնելու ջրի արդյունահանման ծավալները, բացակայում են: Այս համատեքստում շատ կարևոր է հասկանալ, թե ՀՀ-ում ինչպես են կառավարվում ջրային ռեսուրսները, և ինչ ուղղություններով են կատարվում ներդրումներ այս ոլորտում:

Հաջորդիվ անդրադառնալու ենք ՀՀ-ում ջրային ռեսուրսների կառավարմանը և այս ոլորտում պետական, մասնավոր ու միջազգային բազմաթիվ կազմակերպությունների միջոցով կատարվող ներդրումներին:

Շարունակելի

¹⁵ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ: Ջրամատակարարման ժամանակացույց, 2021-2023 թթ., <https://www.veolia.am/hy/media/mamowli-hagordagrowthownner>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Հաշվետվություններ: Ջրամատակարարման և ջրահեռացման հաշվեկշիռ, 2010-2023 թթ.:
2. ՀՀ վիճակագրական կոմիտե: Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2010-2023 թթ.:
3. ՀՀ վիճակագրական կոմիտե: Տարեգիրք: Արդյունաբերություն, Էներգետիկա, 2010-2023 թթ.:
4. ՀՀ վիճակագրական կոմիտե: Տարեգիրք: Գյուղատնտեսություն, 2010-2023 թթ.:
5. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ: Ջրամատակարարման ժամանակացույց, 2021-2023 թթ., <https://www.veolia.am/hy/media/mamowli-hagordagrowthownner>
6. International Trade Center, Trade Map, List of products imported by Armenia, 2010-2023

Алик ТОРОСЯН

Младший эксперт научно-исследовательского центра «Амберд», АГЭУ

ОКРУЖАЮЩАЯ СРЕДА И ИЗМЕНЕНИЕ КЛИМАТА

**ПРОБЛЕМА СОКРАЩЕНИЯ ВОДНЫХ РЕСУРСОВ В АРМЕНИИ:
ЧАСТЬ 2. ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ**

Водные ресурсы являются не только необходимым благом для нормальной жизнедеятельности населения, но и ресурсом первостепенной важности для продукции, производимой в ряде отраслей. К таким отраслям относятся сельское хозяйство, энергетика и обрабатывающая промышленность. В последние годы в Республике Армения наблюдается резкое сокращение водных ресурсов, что обусловлено как изменением природных условий, так и неэффективным управлением водными ресурсами. Конечно, в таких условиях существенно страдают отрасли, зависящие от водных ресурсов. Сокращение водных ресурсов приводит к снижению выпуска продукции в сельскохозяйственном и энергетическом секторах, а также к росту цен на продукцию, производимую в этих секторах. Кроме того, неэффективное и непропорциональное управление водными ресурсами также способствует непропорциональному развитию регионов страны.

Ключевые слова: *вода, водные ресурсы, сельское хозяйство, энергетика, эффективность переработки, непропорциональное территориальное развитие*

Alik TOROSYAN

Junior Expert at "Amberd" Research Center, ASUE

ENVIRONMENT AND CLIMATE CHANGE

**THE PROBLEM OF WATER RESOURCES DEPLETION IN ARMENIA:
PART 2. ECONOMIC CONSEQUENCES**

Water resources are important not only for sustaining the population, but also for supporting agriculture, energy, and manufacturing. In recent years, there has been a sharp decline in water resources in the Republic of Armenia, which is due to both changes in natural conditions and inefficient management of water resources. Such conditions affect sectors dependent on water resources significantly. The decline in water resources leads to a decrease in the output created in the agricultural and energy sectors, as well as an increase in the prices of products from these sectors. Moreover, inefficient and disproportionate management of water resources also contributes to the disproportionate development between regions in the country.

Keywords: *water, water resources, agriculture, energy, processing efficiency, disproportionate territorial development*